Նազարէթեանին տուեց երկու հարց: Առաջին՝ ճի՞շտ է, որ բոլշեվիկների և քէմալականների միջև կնքուած է դաշտնի համաձայնութիւն: Երկրորդ՝ ճի՞շտ է, որ այդ համաձայնութիւնը ուղղուած է նաև Հայաստանի դէմ: Բոլշեվիկ–քէմալական համաձայնութեան փաստը նա չհերքեց, բայց շատ երկար խօսում էր այն մասին, որ կոմունիստական յեղափոխութիւնը պաշտպան է ճնշուած ազգերին և, ուրեմն, չի կարող չպաշտպանել նաև հայ ժողովրդին: Հ.Յ.Դ.-Բիւրօի ներկայացուցիչները հեռացան այն համոզումով, որ եթէ բոլշեվիկ–քէմալական բարեկամութեան շահերը պահանջեն, Հայաստանը կը զոհաբերուի յանուն բոլշեվիկների արևելեան քաղաքականութեան: Տեսակցութեան մէջոգին, յիշելով Լենինի դէկրէտը Հայաստանի անկախութեան մասին, ինչպէս նաև գաշնակցականներից ոմանց գործակցութիւնը Մ. Շահումեանին, Հ. Յ. Դ. Բիւրօի անդամները յայտնեցին այն միտքը, թէ հայ ժողովրդի շահը պահանջում է որոշ հասկացողութիւն բոլշեվիկների և Հայաստանի ղեկավար կուսակցութեան մէջև: Պատասխանը եղաւ չոր հեգնական ժպիտ: Ինչ հասկացողութիւն, հարկաւոր է արագացնել խորհրդային իշխանութեան տարածումը նաև Կովկասի վրա: Ընդառաջ գնալու, համաձայնութեան եզր գտնելու ո՛չ մի ցանկութիւն չարտայայտուեց կովկասեան բիւրօի վարիչի կողմից:

Թէ՛ նախորդ դէպքերը, թէ՛ այս փաստը և թէ՛ այն դաշտնի տեղեկութիւնները, որ ամէն օր ստացւում էին կառավարութեան հետախուզական բաժնում, ո՛չ մի կասկած չէին թողնում այլևս, որ Հայաստանի դէմ նիւթւում է մի դաւ և որ այդ դաւի անմիջական մասնակիցներն ու ղեկավարները Հայաստանում հիւրընկալուած հայ կոմունիստներն են: Դանդաղելն այլևս յանցանք էր, և կառավարութիւնը ձեռք առաւ կտրուկ միջոցներ. իրար յետևից տեղի ունեցան ձերբակալութիւններ: Բռնուեց աչքի ընկնող կոմունիստների մեծ մասը, որոնք որոշ ժամանակ բանտում պահուելուց յետոյ՝ արտաքսուեցին Հայաստանի սահմաններից: Ձերբակալուածների մէջ էր և Աւիս Նուրիջանեանը, որը կարողացաւ փախչել և յետագային դարձաւ հակապետական չարժման մոլի ղեկավարներից մէկը:

Կատարուած ձերբակալութիւններն ու խուզարկութիւնները կառավարութեան ձեռքը տուին առատ նիւթ, որից երևաց, որ բոլշեվիկները պատրաստում էին Հայաստանում ընդհանուր ապստամբութիւն, այդ նպատակով արտասահմանից ստացել էին խոշոր գումարներ և ձեռնարկել էին մարտական խմբերի կազմակերպութեան: Ցայտնի դարձաւ, ընդհանուր առմամբ, և ապստամբութեան յատակագիծը: Պարզուեց նաև, որ բոլշեվիկները որոշած են եղել օգտագործել Հայաստանի այլազգի տարրերի — մահմեդականների և ռուսների դժգոհութիւնը, ինչպէս նաև երկրում տիրող պարենաւորման ծանր կացութիւնը, որը սրուել էր այն պատճառով, որ կառավարութիւնը իր ունեցած հացի պաշարի մեծ մասը յատկացրել էր ցանելու, իսկ ամերիկեան ալիւրը ուշացել էր փոխադրութեան միջոցների թերութեան հետեւանքով: